



Կարգապահական գործ թիվ 19085

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 55-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/50-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՇԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ՝ նաև Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբաններ Արթուր Մկրտչյանին (արտոնագիր՝ թիվ 1582) և Արշակ Կարապետյանին (արտոնագիր՝ թիվ 1057) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Չ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Իրա Խուդիյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2016 թվականի հոկտեմբերի 29-ին Հատուկ քննչական ծառայությունում (**այսուհետ՝ նաև ՀԲԾ**) հարուցվել է թիվ 62227116 քրեական գործը, որը 2017 թվականի հունիսի 26-ին ուղարկել են Կոտայքի մարզային վարչություն՝ նախաքննությունը շարունակելու համար:

Դիմողը նշել է, որ 2017 թվականի մայիսի 16-ին կնքել է պայմանագիր «Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի հետ՝ վճարելով 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Արշակ Կարապետյանը հրաժարվել է ծառայություններ մատուցել: Գրավոր դիմել է փաստաբաններ Արթուր Մկրտչյանին և Արշակ Կարապետյանին (**այսուհետ՝ նաև Պատասխանողներ**), որպեսզի ամբողջությամբ ետ վերադարձնեն չկատարած աշխատանքի դիմաց վճարած

գումարը, սակայն նրանք հրաժարվել են իր գումարները վերադարձնելուց և չեն պատասխանում իր գրավոր դիմումներին:

Դիմողը դիմումին կից ներկայացրել է թիվ 62227116 քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին որոշման պատճենը, ինչպես նաև Պատասխանողներին ուղղված դիմումի և փոստային անդորրագրերի պատճենները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 15.07.2019թ. թիվ 221-Ա/ԿԳ-19085 որոշմամբ փաստաբաններ Արշակ Կարապետյանի և Արթուր Մկրտչյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործը 19.07.2019թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ փաստաբան Հունան Բաբայանին (այսուհետ՝ նաև Նախապատրաստող):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում և Խորհրդի նիստին Դիմողի կողմից ներկայացվել են բացատրություններ, որոնցով Դիմողը վերահաստատել է իր դիրքորոշումը:

Խորհրդի նիստին Դիմողն ընդունել է այն փաստը, որ իր դիմումում Պատասխանողներին վերագրվող վարքագծի վերաբերյալ տեղյակ է եղել 2017թ.-ից:

3.2. Պատասխանողների համառոտ բացատրությունները.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողների կողմից ներկայացվել են բացատրություններ՝ հետևյալ բովանդակությամբ:

3.2.1 Արշակ Կարապետյանի բացատրությունը

Պատասխանող փաստաբան Արշակ Կարապետյանն իր բացատրությունում հայտնել է հետևյալը:

Արշակ Կարապետյանը որպես փաստաբան աշխատել է «Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ում: Վերջինիս և Դիմողի միջև 16.05.2017թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ նշյալ ընկերությունը պարտավորվել է Դիմողին տրամադրել փաստաբաններ թիվ 20142715 քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման բողոքարկման հարցով և ՀԲԾ-ի

վարույթում գտնվող քրեական գործով որպես տուժող Դիմողի շահերը ներկայացնելու նպատակով:

Նշված պայմանագրով Պատասխանողը և փաստաբան Ռոբերտ Դարբինյանը նշանակվել են Դիմողի ներկայացուցիչներ:

Պատասխանող Արշակ Կարապետյանի պնդմամբ, ինքը և փաստաբան Ռոբերտ Դարբինյանն իրենց պարտավորությունները կատարել են պատշաճ և բարեխիղճ և փաստաբանի վարքագծի որևէ կանոն չեն խախտել: Արդյունքում հսկող դատախազի կողմից նշված որոշումը վերացվել է, և ՀՔԾ-ի վարույթում գտնվող քրեական գործի ողջ նախաքննության ընթացքում Պատասխանող Արշակ Կարապետյանն ու Ռոբերտ Դարբինյանը ներկայացրել են Դիմողի շահերը, մասնակցել են համապատասխան քննչական գործողություններին:

ՀՔԾ-ի վարույթում գտնվող նշված քրեական գործից անջատվել է մաս, որն ուղարկվել է Կոտայքի մարզի քննչական վարչություն՝ նախաքննության, իսկ մյուս մասով գործն ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննության:

Ըստ Արշակ Կարապետյանի՝ պայմանագրով իրենք ստանձնել են Դիմողի ներկայացուցչությունը միայն ՀՔԾ-ի վարույթում քննվող քրեական գործի նախաքննության փուլում, ինչն իրենց կողմից ամբողջությամբ իրականացվել է:

12.09.2017թ. Դիմողի և Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի միջև կնքվել է երկրորդ պայմանագիրը, որի համաձայն՝ իրենք պետք է շարունակեին Դիմողի շահերը ներկայացնել նաև դատաքննության փուլում՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված գործով, սակայն Դիմողի 09.10.2018թ. դիմումի հիման վրա ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է, և կատարվել է վերջնահաշվարկ:

Ըստ Արշակ Կարապետյանի՝ Կոտայքի մարզի քննչական վարչությունում քննվող քրեական գործով Դիմողի շահերը ներկայացնելու պարտավորություն իրենք չեն ունեցել, քանի որ Դիմողի կողմից նշված գործով նախաքննության իրականացման համար փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել:

Ըստ Արշակ Կարապետյանի՝ քրեական գործն իր տրամադրության տակ չգտնվելու հետևանքով ինքը չի կարող ներկայացնել իր բացատրությունը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:

Խորհրդի նիստին Պատասխանող փաստաբան Արշակ Կարապետյանը վերահաստատել է իր դիրքորոշումը:

3.2.2 Արթուր Մկրտչյանի բացատրությունը

Խորհրդի նիստում Պատասխանող փաստաբան Արթուր Մկրտչյանն իր բացատրությունում հայտնել է հետևյալը:

«Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ում-ի և Դիմողի միջև 16.05.2017թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ նշյալ ընկերությունը պարտավորվել է թիվ 20142715 քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման բողոքարկման հարցով և ՀՔԾ-ի վարույթում գտնվող քրեական գործով որպես տուժող ներկայացնել Դիմողի շահերը:

«Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի կողմից փաստաբաններ են նշանակվել Արշակ Կարապետյանը և Ռոբերտ Դարբինյանը: Վերջիններիս կողմից պատշաճ կերպով մատուցված ծառայությունների արդյունքում նշված որոշումը վերացվել է, կատարվել է նախաքննություն, որի ընթացքում նշված փաստաբանների կողմից Դիմողին ցուցաբերվել է պատշաճ իրավաբանական օգնություն:

ՀՔԾ-ի վարույթում գտնվող նշված քրեական գործից անջատվել է մաս, որն ուղարկվել է Կոտայքի մարզի քննչական վարչություն՝ նախաքննության, իսկ մյուս մասով գործն ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննության:

Դիմողը տեղեկացվել է, որ պայմանագրի շրջանակներում ծառայություններն ամբողջությամբ մատուցվել են, քանի որ 16.05.2017թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով փաստաբանական ծառայությունները նախատեսվել են միայն նախաքննության փուլում: Դիմողը ցանկացել է, որ դատաքննության փուլում ևս իր շահերը պաշտպանեն միևնույն փաստաբանները, և 12.09.2017թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման նոր պայմանագիր՝ միայն թիվ ԿԴ2/0040/01/17 քրեական գործի շրջանակներում Դիմողի՝ որպես տուժողի շահերը ներկայացնելու վերաբերյալ: Սույն պայմանագրի շրջանակներում Դիմողին պատշաճ կարգով մատուցվել են ծառայություններ: 09.10.2018թ. Դիմողը ներկայացրել է պայմանագիրը լուծելու և վերջնահաշվարկ կատարելու դիմում, ինչը կատարվել է 15.10.2018թ.-ին:

12.09.2017թ.-ից մինչ օրս Դիմողը երբևէ դժգոհություն չի հայտնել 16.05.2017թ. կնքված պայմանագրով մատուցված փաստաբանական ծառայություններից և չի հայտնել, որ պայմանագրով որևէ գործողություն թերի է կատարվել:

Ըստ Պատասխանող Արթուր Մկրտչյանի՝ սույն իրավահարաբերության մեջ ինքը հանդես է գալիս որպես «Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի տնօրեն, ծառայություններ մատուցող և ոչ թե փաստաբան, ինչը բացառում է տվյալ հարցում փաստաբանի վարքագծի կանոնի որևէ խախտում:

Պատասխանող Արթուր Մկրտչյանի պնդմամբ, Կոտայքի մարզի (Աբովյանի) քննչական բաժնում քննվող քրեական գործով Դիմողին իրավաբանական օգնություն ցուցաբերելու պայմանագիր չի կնքվել, հետևաբար նշված՝ անջատված գործով

Դիմողի շահերի ներկայացուցչություն իրականացնելու պարտավորություն չի ստանձնվել:

Պատասխանող Արթուր Մկրտչյանի կողմից ներկայացվել են 16.05.2017թ. և 12.09.2017թ. կնքված պայմանագրերի պատճենները, 09.10.2018թ. դիմումի և 15.10.2018թ. տեղեկանքի պատճենները:

Խորհրդի նիստում Պատասխանող փաստաբան Արթուր Մկրտչյանը վերահաստատել է իր դիրքորոշումը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Նախապատրաստողը 19.09.2019թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 23.09.2019 թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 18.02.2020թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Պատասխանող Արշակ Կարապետյանը հանդիսացել է Դիմող Իրա Խուդիյանի ներկայացուցիչը (Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Դիմողի և Պարասխանողների բացատրություններով, Դիմողի և «Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի միջև 16.05.2017թ. և 12.09.2017թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերով, 16.05.2017թ. կնքված պայմանագիրն ավարտվելու մասին «Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի ծանուցմամբ, 12.09.2017թ. կնքված պայմանագիրը

լուծելու մասին Դիմողի դիմումով, Պատասխանող Արշակ Կարապետյանի և փաստաբան Ռոբերտ Դարբինյանի կողմից ստորագրված տեղեկանքով՝ 12.09.2017թ. կնքված պայմանագրի ծավալի և արժեքի վերաբերյալ):

- Դիմող Իրա Խուդիյանը Պատասխանող փաստաբաններ Արշակ Կարապետյանի և Արթուր Մկրտչյանի առերևույթ հակաիրավական վարքագիծը հայտնաբերել է 2017թ.-ին: (Նշված փաստը հաստատվում է Դիմողի և «Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի միջև 16.05.2017թ. և 12.09.2017թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերով, 16.05.2017թ. կնքված պայմանագիրն ավարտվելու մասին «Մկրտչյան և Կարապետյան» ՍՊԸ-ի ծանուցմամբ, 12.09.2017թ. կնքված պայմանագիրը լուծելու մասին Դիմողի դիմումով, Պատասխանող Արշակ Կարապետյանի և փաստաբան Ռոբերտ Դարբինյանի կողմից ստորագրված տեղեկանքով՝ 12.09.2017թ. կնքված պայմանագրի ծավալի և արժեքի վերաբերյալ):

6. Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Մկրտչյանի (արտոնագիր 1226, ստացված՝ 15.10.2011թ.) նկատմամբ 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում չհաշված սույն կարգապահական վարույթը 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված վարույթ), որով վերջինս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արշակ Կարապետյանի (արտոնագիր 1057, ստացված՝ 14.02.2011թ.) նկատմամբ 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում չհաշված սույն կարգապահական վարույթը 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (2 ավարտված), որոնք կարճվել են:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, Պալատի նախագահի 15.07.2019թ. թիվ 221-Ա/ԿԳ-19085 որոշմամբ փաստաբաններ Արշակ Կարապետյանի և Արթուր Մկրտչյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնադրի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի

կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Նույնական դրույթ է նախատեսված նաև **Կարգի 25-րդ հոդվածի 1-ին մասում:**

Դիմողի դիմումի շրջանակներում Պատասխանողներ Արշակ Կարապետյանի և Արթուր Մկրտչյանի կարգապահական պատասխանատվության հիմք կարող էր լինել Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետի խախտումը, այն է՝ Դիմողին պայմանագրով ստացած հոնորարի այն մասը չվերադարձնելը, որի դիմաց փաստացի ծառայություն չի մատուցվել:

Սակայն Դիմողի կողմից Պատասխանողներին վերագրվող վարքագիծը տեղի է ունեցել 2017թ.-ին, այն է՝ Դիմողի և Պատասխանողների միջև ծառայությունների մատուցման երկու պայմանագիր է կնքվել, համապատասխանաբար, 16.05.2017թ.-ին և 12.09.2017թ.-ին, որոնք նույն տարում ավարտվել են: Դիմողը նաև ընդունել է այն փաստը, որ Պատասխանողներին վերագրվող վարքագծի մասին տեղյակ է եղել 2017 թվականից:

Վերոգրյալից հետևում է, որ սույն կարգապահական վարույթի առարկայի մեջ մտնող ողջ գործընթացը տեղի է ունեցել, և Դիմողը Պատասխանողներին վերագրվող վարքագծի մասին տեղեկացել է շուրջ երեք տարի առաջ: Մինչդեռ, ինչպես նշված է Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասում, փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Հետևաբար, Պալատը գտնում է, որ Դիմողի կողմից մատնաշված հանգամանքները և Պատասխանողներին վերագրվող վարքագիծը Պալատի կողմից ենթակա չեն ըստ էության քննության, քանի որ անցել են Օրենքի նշյալ դրույթով նախատեսված վաղեմության ժամկետերը, իսկ Պատասխանողների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.3 հոդվածի 3-րդ մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Պալատի նախագահի 15.07.2019թ. թիվ 221-Ա/ԿԳ-19085 որոշմամբ փաստաբաններ Արթուր Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 1582) և Արշակ Կարապետյանի (արտոնագիր՝ թիվ 1057) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին, ինչպես նաև փաստաբաններ Արթուր Մկրտչյանին և Արշակ Կարապետյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան

18 փետրվարի 2020թ.

թիվ ԿԳ/50-Ա

ք. Երևան